

նոյն իսկ ամբաստանած ըլլան Աւգոստինեանները Շահին քով, հաւատացնել ուղեւով, թէ Հայոց միութիւնը Հոռմի Եկեղեցւոյն հետ համադօր է Շահի իշխանութենէն հեռանալուն, որովհետեւ Միութիւնս իւր հետը պիտի բերէ Հայաստանի նուաճումը քրիստոնէայ իշխանէ մը<sup>6</sup> :

Թէ կաթողիկոսի մէկ թուղթը ուղղուած առ Ս. Աթոռը, հայ ժողովրդեան մէկ մասին մէջ ազատագրութեան յոյսեր եւ ուրիշ մէկ մասի մէջ քաղաքական յոռետեսութիւն արթնցուցած ըլլայ, կը համարինք շատ բնական: Տեղահանուած ժողովուրդը, որ նոր հայրենիքի մէջ ենթարկուած էր ամէն տեսակ զրկանքի, կարօտով կը նայէր ետ դէպի իր խանձարուրքը. հինաւուրց այն ըմբռնումը, թէ օտարադէն բռնաւորներու լուծը արեւմտեանց «Փռանկներու» աջակցութեամբ պիտի թօթափուի, կը ներշնչէր իրենց յոյս եւ լաւատեսութիւն: Բայց կար նաեւ յոռետեսներու խմբակցութիւն մը, որ ամէն փորձի կատարածը սեւագոյն կը տեսնէր. որովհետեւ անողորմ էին տէրերը, կ'ընկճէին ամէն շարժում ամենախիստ միջոցներով: Անշուշտ դրութեան փափկութիւնը ծանօթ էր կաթողիկոսին. որուն միակ փափազն էր Երկրին մէջ ցիրուցան եւ օտարութեան մէջ վտարանդի ժողովրդեան տնտեսական պայմանները բարւո-

<sup>6</sup> Նժան Թելադրութիւն մ'աւ ըրին Ջուղայեցիք Շահին 1610ին առթիւ Հռիփսիմեանց նշխարներու Եւրոպա փոխադրելու փորձին. Առ. Դաւրիժ., էջ 191: